

ՅԱՐԻԿԻ ՏԱՐԻ ԱՌԱՋ

(1799—1809)

Բ.

ԴԱՆՍԻԼ ԿԱԹՈՒԻՆԻԿՈՍ

«Դանսիլ արքեպիսկոպոս ծառայ Քրիստոսի Աստուծոյ ողջոյն և Աստուածային օրհնութիւն մատուցանեմ աղնիւ սիրելանիդ իմոյ ի Քրիստոս զօրացելոյ մահտեսի Յովակիմ Աստուածասէր և բարեպաշտ աղայիդ և քոյայնոցն ամենեցուն. որոց լիցի ի տէր խնդալ Ամէն։

«Ծանկիր ցանկալիդ իմ. յառաջ քան զայս գրեցի զպատասխանի գրոյն բոյ և սպասեմ ևս որպէս ծանոյց ազնուականիդ առ ի գիտել զողջութենէդ և զուրախական կենացդ և ուրախ լինել և միշտ աղօթող եմ վասն կենաց և բարելաջողութեանդ զոր տէր Քրիստոս պարգևեցէ քեզ զիսպղաղ կեանս և բարեյաջողութեամբ պահեսցէ. խնդրեմ ի քէն զի ազանելի բարուն մաշենալ է մէկ ջուխտ բարուն յղես ինծ որ հագնեմ քեզ օրհնող լինիմ եւ լիր ողջ եւ ցընծուն կենօք ի սէր իմ ամէն։

Քրեցաւ 1806 և ի փետրվարի 20

ի Մարտարայ»

Դիւան Ե. Եր. 477 ՃՀԱ.

Այս փոքրիկ կոնդակը գեղեցիկ նկարագիր է ժամանակի, ոչ մի պատմական շարադրութիւն չէ կարող այնպէս փայլուն կերպով պատկերացնել մի ժամանակ, ուր մի ազդէ ընտրեալ հոգևոր հովիւր, մի զոյդ բարուծ է խնդրում, որովհետեւ հինը մաշուել է...

Ահա թէ ինչ թշուառութեան էր հասել եկեղեցին վեց տարուան մէջ. այն եկեղեցական իշխանաւորը, որ եօթը տարի առաջ ազդի հայրապետի ու ամ-

բողջ միաբանութեան համար թանգագին պարգևներ էր սովարկում, այսօր մի զոյդ կօշիկ չուներ հազնելու և խնդրում էր այդ իրքեւ մի մեծ շնորհ, խնդրում էր իւր կոնդակով, որի համար ամեն մի հայ այն ժամանակներում պատրաստ էր մեծամեծ զոհողութիւններ անել:

Դժուար է երևակայել, թէ ինչպիսի տոկունութեամբ Դանիէլ կաթուղիկոսը կռիւ մզեց երկու այնպիսի հոկայական հաստատուն բնաւորութեանց տէր, նշանաւոր եկեղեցականների դէմ, մինչդեռ իւր ախոյեանների համեմատութեամբ ինքն անպայման մեզմ և խաղաղասէր մարդ էր:

Երկու հատոր (Ե. և Զ.) Դիւանների մէջ ամփոփուած են Դանիէլ—Յովսէփիեան և Դաւիթ—Դանիէլեան կռիւներին վերաբերեալ թղթակցութիւնները, որոնք հազարաւոր երեսներ են բռնում, բայց գժրախտաբար գրեթէ ոչինչ չեն յայտնում մեզ գործող անձանց անցեալի մասին, որոնք ըեմ են դուրս գալիս արդէն իրքեւ պատրաստի ախոյեաններ, ուստի և դրանց անցեալի մասին պիտի գոհանանք ենթադրութիւններով:

Երբ սկսում են կաթուղիկոսական պայքարները Ղուկաս հայրապետի մահուանից յետոյ, Դանիէլն հանդէս է գալիս իրքեւ Կ. Պօլսի պատրիարք, Յովսէփը հարուստ անցեալով Ռուսաստանի առաջնորդութիւն ստեղծող ու տէր, իսկ Դաւիթը Էջմիածնի միաբանութեան աղղեցիկ անձն, բայց ոչ առաջին շարքերում, այլ երկրորդ:

Եթէ հաւատանք իւրաքանչիւր թեկնածուի խօսքերին, Յովսէփն արդէն Սիմէօն կաթուղիկոսից, իսկ Դանիէլը Ղուկասից նախատեսուած էին իրքեւ թեկնածուք, սակայն հանգամանքները փոխուել էին, Կար ժամանակ, և այդ էր Սիմէօն կաթուղիկոսի վախճանի ժամանակը, երբ Յովսէփը կարող էր ամենայարմար թեկնածուն համարուել, իսկ Ղուկասու վախճանին Յովսէփին անընդունելի էր թէ տաճիկներին և թէ պարսիկներին, որովհետեւ

ոռւսական յաղթական բանակների հետ, երևացել էր թէ տաճկաց և թէ պարսից սահմաններում։ Ահա և այն պատճառաբանութիւնը, որ յառաջ են բերում էջմիածնեցիք Յովսէփի ընտրութեան դէմ։

Զը նայելով սորան, Յովսէփը յաղթութիւն տարաւ և դիւանագիտական ուժով ընտրուեց կաթուղիկոս, իւր հակառակորդներին աքսորել տալով Թօխաթ։

Սակայն ով էր Դանիէլն, ինչ արժանիքների համար նա արժանի համարուեցաւ հայրապետութեան և իւր որ արժանիքների համար երկիցս ընտրուեցաւ կաթուղիկոս։

Դիւանները մեր այս հարցման պատասխանը չեն տալիս. ամենայն ուշադրութեամբ որոնեցի բարեկամների և թշնամինների թղթերի մէջ այդ արժանիքն և պիտի խոստովանիմ, չը գտայ: Իրաւ է, չը գտայ և ոչ մի հակառակ փաստ, չը դատայ մի տող, մի ակնարկ, որ ցոյց տար, թէ Դանիէլն անարժան էր կաթուղիկոսութեան։ Անշուշտ Յովսէփի արհույ բարձրայօն վերաբերմունքը բղիում է ոչ այնքան Դանիէլի անարժանութիւնից, որքան Յովսէփի մեծամտութիւնից, սակայն այդ դիպուածումն էլ Յովսէփը նրա մասին դրական ոչ մի թերութիւն չէ յիշում, այլ անուանում է նրան «ճանճիկ», իւրեն հետ համեմատելով՝ Դանիէլին համարում է շատ աննշան, ծառայ և այլ ոչինչ, մինչդեռ վերջնական յաղթութիւն տանելուց յետոյ նրան էլ համարում է իւրն և կամենում է թեթևացնել նրա վիճակը։ Այս ապացուցանում է Դանիէլի բարոյական արժանիքը, նա անպայման իբրև մարդ վայելում էր ամենքի սէրն և ժխտական յատկութիւններ չունէր, ապա թէ ոչ թշնամիք չէին զլանալ յիշատակել և օգտուել նրա թերութիւններից։

Կոուի աւելի ևս բորբոքուած ժամանակ, կրքերի յուզման գաղաթնակէտին, Դաւիթն ու իւր կուսակիցները ոչ մի թերութիւն, ոչ մի բարոյական արատ չեն կարողանում հաստատել նրա վրայ: Ինչ որ խօսում է կաշառատուութեան մասին, այդ հաշուի առնելու չէ, ու-

բովհետև այդ գէնքն ընդհանուր էր և պիտի խոստովանել, որ այդ թերութիւնն էլ հետևանք էր թշնամիների գործունէութեան, երբ Դանիէլեանք տեսնում էին, որ այլ ելք չկայ, գործ էին դնում ժամանակի ամենից զօրաւոր զէնքը, կաշառը՝ կլասիքական է Գէորգ Աղայեկովի խոսքը, ուղղած Դաւթին, «աս բանս փարայով կըլլայ, եթէ չունիս, գլուխու ծախէ և փարայ ճարէ»:

Մի հատիկ անարգական բառ կայ ուզգած Դանիէլի հասցէին, որ դժբաղտաբար ինձ անհասկանալի է, այդ բառն է «մօզիւզ» (Թուղթ ԼԲ. եր. 95, Դիւան Ե.) արդեօք դա զեղծուած չէ մազնղ=թաւամազ բառից: Այս ենթադրութեան հակում եմ և այն պատճառով, որ երբ Դանիէլն ընկաւ Դաւթի ձեռքը, սա շտապեց նրա մօրուսը գերծել տալ, անշուշտ դա մի արտաքին փառահեղութեան նշան էր, որից Դաւթին ուզում էր զրկել իւր ախայեանին: Այն էլ պիտի ի յուշ ածենք, որ այդ ժամանակներում հոգեւորականի արտաքին արժանիքների մէջ փառաւոր մօրուսը յետին տեղը չէր բռնում:

Եթէ թշնամիք անդամ Դանիէլի վրայ ոչ մի արատ չեն կարողանում բարձել, արդեօք որոնք են նրա արժանիքները, որ պէտք է թուեն Դանիէլեանները:

Հարիւրաւոր ներբողական և շողագորթող նամակների մէջ զուր վնտուեցի այդ գրական յատկութիւնները, գտածներս բառեր են միայն, բառեր, որ դոյն ժամանակին անխտիր շռայլում էին բարձրաստիճան հոգենոր պետերին: Ահա այդ բառերը, Դանիէլ աստուածիմաստ, քաջընտիր, գերաբաղծալի, բարեհամբաւ, արհիամեծար, վեհիմաստ, իմաստնախոհ, աստուածաբան, հոգեկոչ, նըքիմաստ, հոգեզգօն, իմաստնապերծ, գերընծալի, գլառատ, անծն բարեսէր:

Եթէ կարելի է այս ածականներից որևէ է ենթադրութիւն անել, դա է Դանիէլի բարեսիրտ և խոհեմ լինելը, որ և երեսում է իւր տառապալից կեանքի ամեն

մի քայլափոխում։ Ժամանակի եպիսկոպոսների մէջ նայեաին էլ չէ եղել և իւր գիտութեամբ ու իմաստութեամբ, թէև այդ գիտութեան ու իմաստութեան շափը շատ սահմանափակ էր։

Թէ ի՞նչ արժանիքների շնորհիւ էր նա հասել պատրիարքութեան և ապա հայրապետութեան, և իւր որյատկութիւնների շնորհիւ այնքան ջերմեռանդ կուսակիցներ ունէր, պարզ չէ բոլորովին, որովհետև թղթերին մէջ ակնարկ չը կայ նրա նախկին գործունէութեան մասին։

Դալով կուսակիցների մոլեռանդութեան, պէտք է աչքաթող չանել, որ շատերի համար դա անձնական շահու խնդիր էր, իսկ աւելի անկեղծների համար սկըզբունքի։

Առաջին ընարութեան միջոցին Ս. Էջմիածնի միաբանութեան առաջաւորներին զեկավարում էր վանքի շահն ու անձնական երկիւղը՝ Վանքը պարսից սահմանումը լինելով՝ կարող էր պաշտպանութիւն գտնել պարսիկներից, եթէ հայրապետն իրենց հաճելի անձն լինէր. վանքը կը բարգաւաճէր, եթէ տաճիկներին հաճելի անձն լինէր հայրապետը, որովհետև ամբողջ նիւթական հարստութիւնը տաճելի հաճելի այլականացը էին մատակարարում այն ժամանակ։ Արդ՝ երկու տէրութեանց ոխերիմ թշնամի պետութեան զօրքերի շարքերում գտնուած Յովսէփը կասկածելի էր, իսկ Դանիէլը հաճելի էր Դրանը և իւր հեղահամբոյր ընութեամբ կարող էր և պարսից հաճելի դառնալ, ահա թէ ինչու նրան ընտրեցին։ Անձնական երկիւղին գալով՝ Էջմիածնեցիք վախենում էին Յովսէփից, որի մեծամատութիւնից Ղուկաս կաթուղիկոսն իսկ վիրաւորուած էր։ Ղուկասը քանիցս հրաւիրել էր սրան գալ և հաշիւ տալ իրեն, բայց Յովսէփը բանի տեղ չէր դրել այդ հրամանը, մինչդեռ Դանիէլ արհին չէր մոռացել իւր միաբանակիցներին և հայրապետին ընծաներով ժառայել։

Երկրորդ ընտրութեան ժամանակ բացի այս պատճառներից կային և նոր առիթներ. նախ՝ պէտք էր տարապարուուց աքսորուած Դանիէլին մխիթարել, երկրորդ միաբանութեան երկրորդական շարքերից բռնութեամբ յառաջ դիմող Դաւթին սանձել:

Անշուշտ մեծ գեր էին խաղում և կուսակցութեանց շահերը, կային ազդեցիկ անձինք, որ պէտք է երկիւղ կրէին իրենց հակառակորդի բարձրանալուց: Գեղեցիկ նկարագիր է ընտրական պայքարին հետեւող մաքառման լի. նամակը Դիւան Ե. եր. 102—105. Սա ժամանակակցի և ականատեսի նկարագիրն է Դաւթի գողոնի օծման: Այս թղթից պարզ կերպով երևում է Դաւթի ու Գրիգորի յարաբելութիւնների կեղծութիւնը. Գրիգոր վարդապետը Յովսէփի գանձերով Դաւթին կաթուղիկոսացնում է, բայց պահանջում է, որ իրեն հաստատել տայ Ռուսիոյ հայոց առաջնորդ, Դաւթի համաձայնում է, բայց օծուելուց յետոյ գիր գրելով կայսեր, ոչ մի բառով չէ յիշում Գրիգորին, որ բռնելով այդ կոնդակին արգելում է, նորն է շարադրում և ուղարկում Դաւթին, որ արտագրէ և ուղարկէ կայսեր: Հրաշովի բարեկամութեան անկեղծութիւն:

Ն. ՔԱՐԱՄԵԱՆ